



ԸՆԴԴԵՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՄԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԿ  
ОО ФОНД ПРОТИВ ПРАВОБОГО ПРОИЗВОЛА  
FOUNDATION AGAINST VIOLATION OF LAW NGO

Հայաստան, 0023 Երևան, Արշակունյաց 6, հեռ.՝ (374 10) 582819, ֆաքս՝ (374 10) 58 28 19  
Է-փոստ՝ [info@favl.am](mailto:info@favl.am), կայք՝ [www.favl.am](http://www.favl.am)

30.05.2016թ.

**Հայտ. ՀՀ արդարադատության նախարարին կից հասարակական խորհրդի  
կազմում ընդգրկվելու համար**

**I. Կազմակերպության անվանումը՝**

«Ընդդեմ իրավական կամայականության» հասարակական կազմակերպություն /ԸԻԿ ՀԿ/  
Foundation Against the Violation of Law non-governmental organization /FAVL NGO/

Կազմակերպության նախագահ՝ Միքայել Արամյան  
Գործադիր տնօրեն՝ Լարիսա Ալավերդյան  
Գրասենյակի տնօրեն՝ Քրիստինա Գևորգյան

«Ընդդեմ իրավական կամայականության» (ԸԻԿ) հասարակական կազմակերպությունը շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որը գործում է մարդու իրավունքների բնագավառում: Այն հիմնադրվել է 1991 թվականին և գրանցվել է Արդարադատության Նախարարությունում 1992 թվականի ապրիլի 14-ին:

**II. Կազմակերպության առաքելությունը**

Նպաստել միջազգային մարդասիրական նորմերի, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների տարածմանը, հեռավոր համայնքների սոցիալ-տնտեսական և քաղաքացիական զարգացմանը, Հայաստանում ժողովրդավարական ավանդույթների հաստատմանը:

**III. Կազմակերպության գործունեության աշխարհագրությունը**

ԸԻԿ-ը աջակցություն է տրամադրում Հահայստանի բոլոր մարզերում, այդ թվում ԼՂՀ-ում: ԸԻԿ-ի 5 մասնաճյուղերը գործում են ՀՀ-ի Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի 5 քաղաքներում՝ Եղեգնաձոր, Վայք, Սիսիան, Կապան, Մեղրի, ինչպես նաև ունի ներկայացուցչություն ԼՂՀ-ում:

**IV. Կազմակերպության խնդիրները 2015 -2017թթ. համար**

- կանխարգելել մարդու իրավունքների խախտումները ՀՀ-ում,
- նպաստել Հայաստանում ժողովրդավարության զարգացմանը, իրավունքի գերակայությանը և իրավական պետության ձևավորմանը՝ մասնակցային ընթացակարգերի, տեղական հ/կ-ների և համայնքներում հիմնադրված կամակերպությունների հզորացման միջոցով,
- նպաստել համայնքների կայացմանը և զարգացմանը, հատկապես Հայաստանի հեռավոր համայնքներում,
- նպաստել խոշտանգումների և դաժան ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի վերացմանը,
- աջակցել ՀՀ-ում խոշտանգման և դաժան ու անմարդկային վերաբերմունքի արժանացած անձանց իրավունքների վերականգնմանը, նրանց ինտեգրմանը

- հասարակությունում՝ բուժ-հոգեբանական վերականգնողական ծառայությունների մատուցման միջոցով,
- նպաստել փախստականների ինտեգրմանը, բուժ-հոգեբանական վերականգնողական ծառայությունների մատուցմամբ
- նպաստել պատանդների, զինգերիների, անհայտ կորածների որոնողական աշխատանքներին և նրանց վերադարձին հայրենիք,
- նպաստել խաղաղության հաստատմանը տարածաշրջանում:

## **V. Իրավապաշտպան գործունեություն**

- Անվճար խորհրդատվությունների տրամադրում սոցիալապես անապահով անձանց /տարեկան 800-ից ավելի քաղաքացիների/
- Սոցիալապես անապահով խավերի համար դիմումների, հայցադիմումների, վերաքննիչ և վճռաբեկ բողոքների պատրաստում, դատարաններում անվճար սկզբունքներով ներկայացուցչություն կազմակերպության արտոնագրված փաստաբանների միջոցով.
- Պետական մարմիններին, հասարակական և մասնավոր կազմակերպություններին ուղղված միջնորդություններ
- Դատական գործերի մշտադիտարկում
- Օրենքների նախագծերի մշակում և նախագծերի վերաբերյալ կարծիքների և առաջարկությունների ներկայացում
- Ռազմավարական նշանակություն ունեցող գործերի հետ կապված Մարդու իրավունքների եվրոպական դատարան /ՄԻԵԴ/ գանգատների ներկայացում
- Մարդու իրավունքների և այլ իրավական թեմաներով դասընթացների կազմակերպում

## **VI. Կազմակերպությունը սոցիալական ապահովության ոլորտում, մասնավորապես մարզերում**

- Իրավաբանական աջակցություն կենսաթոշակի և մասնակի կենսաթոշակի տրամադրման հետ կապված խնդիր ունեցող անձանց
- Սոցիալապես անապահով ընտանիքներին օժանդակություն ընտանեկան նպաստների տրամադրման հարցում
- Սոցիալապես անապահով անձանց համար հումանիտար օգնության տրամադրում
- Սոցիալապես անապահով անձանց համար միկրո ծրագրերի աջակցություն /մեղվաբուծություն, չրի արտադրանք/
- Սոցիալապես անապահով անձանց բժշկական և հոգեբանական ծառայությունների մատուցում
- Սոցիալապես անապահով անձանց անվճար դեղորայքի տրամադրում

## **VII. Կազմակերպության դերը ժողովրդավարության հաստատման գործընթացում**

Կազմակերպությունն առանձին միջոցառումների իրականացմամբ ակտիվորեն մասնակցում է հանրապետությունում ժողովրդավարության հաստատման գործընթացին:

- ընտրողների իրավագիտակցության բարձրացմանն ուղղված միջոցառումների կազմակերպում
- ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրականացում

## **VIII. Պայքար խոշտանգումների դեմ և խոշտանգումների գոհերի վերականգնողական աշխատանքներ**

1998թ. ԱՄՔՈՐ միջազգային կազմակերպության աջակցությամբ ԸԻԿ-ը ստեղծել է Հայկական վերականգնողական և զարգացման կենտրոն խոշտանգումների գոհերի համար

/ARDCen-TV/, որի նպատակն է.

- Խոշտանգումների գոհերի բուժ-հոգեբանական վերականգնում
- Խոշտանգումների կանխարգելմանն ուղղված գործունեություն
- Ստացիոնար բուժումների կազմակերպում
- Խոշտանգումների գոհերի ինտեգրում դեպի հասարակություն

1999թ. մինչ օրս ԸԻԿ-ը ՄԱԿ-ի խոշտանգումների գոհերի կամավորական հիմնադրամի /UNVFTV/ աջակցությամբ և ֆինանսավորմամբ կազմակերպում է խոշտանգումների և դաժան վերաբերմունքի ենթարկված անձանց բուժ-հոգեբանական, սոցիալական և իրավաբանական աջակցությունը:

2008թվականից ԸԻԿ-ը հանդիսանում է Խոշտանգումների գոհերի միջազգային խորհրդի /IRCT/ հավատարմագրված անդամը: Կազմակերպության փաստաբան Քրիստինա Գևորկյանը 2016թվականին ընտրվել է նշված կազմակերպության խորհրդի անդամ երեք տարի ժամկետով, որի գործառույթներն են աջակցել ոլորտում քաղաքականության մշակմանը և ձևավորմանը:

2013թվականից Եվրոպական միության կողմից հովանավորվող ծրագրի շրջանակներում Վրաստանի Էմփաթիա /RCT/Empathy/ կազմակերպության հետ համագործակցությամբ ստեղծվել է Կովկասյան հակա-խոշտանգումների ցանց, որի նպատակն է աշխատել խոշտանգումների կանխարգելման, հանցագործներին պատասխանատվության ենթարկելու և խոշտանգումների գոհերի ֆիզիկական և հոգեբանական վիճակի վերականգնելու ուղղությամբ: Ծրագրի շրջանակներում կազմակերպությունը նաև նպատակ ունի նպաստել ՄԱԿ-ի Ստամբուլյան արձանագրության՝ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասով արդյունավետ քննության իրականացման և փաստաթղթավորման մասին ձեռնարկի ներդրմանը: Այդ կապակցությամբ 2015թ. հունիսի 29-30-ը կազմակերպվել է դասընթաց Երևանում, որը անցկացվել է Ստամբուլյան արձանագրության համահեղինակներից՝ Օնդեր Օսկալիպցիի, IRCT-ի իրավաբան Ջեյմս Լիի և Վրաստանի RCT/Empathy-ի նախագահ և Միջազգային հոգեբույժների ասոցիացիայի խորհրդի անդամ Մարիամ Ջիշկարիանիի կողմից, որին մասնակցում էին 30-ից ավելի տարբեր ոլորտի մասնագետներ՝ դատաբժիշկներ, բժիշկներ, քրեակատարողական հիմնարկներում աշխատող բժիշկներ, հոգեբաններ և փաստաբաններ:

## **IX. Մոնիտորինգային խմբերում անդամություն**

- ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ /2006թ-ից/
- ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին առնթեր խոշտանգումների կանխարգելման փորձագիտական խորհուրդ /2011թ-ից/
- «Ձինվոր» հասարակական կազմակերպությունների համագործակցության իրավապաշտպան համակարգող խորհուրդ
- Կրթության և գիտության նախարարության հատուկ կրթական հաստատություններում մոնիտորինգային խմբի անդամ
- Մասնագիտական Խորհուրդ և Բնակարանային հարցերով Հանձնաժողով /ՀՀ Կառավարությանն առնթեր Միգրացիայի և փախստականների հարցերով Վարչություն/
- Երեխաների իրավունքների պաշտպանության ցանց

## **X. Մեր հովանավորները**

- ՄԱԿ-ի խոշտանգումների գոհերի կամավորական հիմնադրամ

- /UN Voluntary Fund for Victims of Torture/ - 1999թ.- մինչ օրս
- ՕԱԿ Ֆոնդ - Միջազգային վերականգնողական կենտրոն  
խոշտանգումների զոհերի համար /OAK Foundation – IRCT/ - 2008թ. մինչ օրս
- Միջազգային Կարմիր Խաչ Հայաստան /ՄԿԽՀ/ICRC/ - 2011թ. մինչ օրս
- Էմփաթիա ՀԿ /Եվրոպական Միություն – 2013թ. մինչ օրս
- Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն – 2016թ.

#### **XI. Հրատարակումներ /հասանելի են նաև [www.favl.am](http://www.favl.am) պաշտոնական կայքում/`**

1. Ստամբուլյան Արձանագրության հայերեն լեզվով թարգմանության նախաձեռնություն` 2015թ. /ՀՀ արդարադատության նախարարության աջակցությամբ/
2. Սեփականության և աշխատանքային իրավունքների պաշտպանության ուղեցույց – 2008թ. /Բաց հասարակության հիմնադրամներ /ԲՀՀ/ աջակցությամբ/
3. Առանձին իրավական հարցերով ուղեցույց – 2008թ. /ԲՀՀ աջակցությամբ/
4. Իրավական հարցերով ուղեցույց – 2009թ. /ԲՀՀ աջակցությամբ/
5. Սոցիալական իրավունքի ուղեցույց – 2010թ. /ԲՀՀ, ՕԲՄՖԱՄ-Հայաստանում աջակցությամբ/
6. Խտրականությունից ազատ լինելու իրավունք – 2010թ. /ԲՀՀ, ՕԲՄՖԱՄ-Հայաստանում աջակցությամբ/
7. Իրավական ուղեցույց երիտասարդների համար /2004թ. ԱՄՆԱԶԳ աջակցությամբ/
8. Մարդու իրավունքները` Քո իրավունքներն են /2004թ. ԸԻԿ/
9. Քաղաքացիական և քաղաքական իրավունքները հառավային կովկասում /2001թ., ԸԻԿ-ի համահեղինակությամբ – Եվրասիա հիմնադրամի աջակցությամբ/

#### **XII. Օրենսդրական նախաձեռնություններ, կարծիքներ – ներկայացված են ոչ բոլորը /կցվում են հայտին/.**

1. Կարծիք սահմանադրական փոփոխությունների նախագծի վերաբերյալ /2015թ., ներկայացվել է handznajoghovi-qartugharutyun@moj.am-ին/
2. Կարծիք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի վերաբերյալ /2015թ., ներկայացվել է ԱԺ խմբակցություններին` hkh@parliament.am, bhk@parliament.am, congress@parliament.am, oek@parliament.am, dashn@parliament.am, heritage@parliament.am /
3. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ /2014թ., ներկայացվել է etumanyants@mail.ru/
4. Առաջարկներ Աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին /2010թ./
5. Կարծիք` ՀՀ քրեակատարողական օրենսգրքում, «Ձերբակալված և Կալանավորված անձանց պահելու մասին» օրենքում, «Քրեակատարողական ծառայության մասին» օրենքներում, ՀՀ Կառավարության 03.08.06թ. հա.1543-ն որոշման մեջ Փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների և որոշման նախագծերի վերաբերյալ
6. Նախագիծ. Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին /2009թ./

#### **XIII. ԱԺ պետբյուջեի քննարկմանը ներկայացվող խնդիրներ /կցվում է սույն դիմումին/**

1. ԱԺ պետբյուջեի քննարկմանը ԸԻԿ-ի կողմից ներկայացված խնդիրներ /2013թ. և 2014թթ. համար/